

ատեն Եւրոպացի փորագրիչին փակագիր ստորագրութիւնը՝ որ պատկերին ստորին ձախ անկիւնը կը գտնուէր՝ փորուած հանուած է, իսկ փորագրութիւնը ամբողջութեամբ բաւական մաշած է Ոսկանի տպագրութենէն ի վեր:

Այս նոր գիւտը ինծի կ'ապահովցնէ որ Ոսկանի պատկերին կաղապարները կ.

Հայ տպագրութեանց յիշատակարաններուն մէջ՝ ուր նոյն իսկ զբաշարն ու սրբագրիչը կը յիշուին՝ մոռցուած են փորագրիչները: Ատոր պատճառը գուցէ ըլլայ սա պարագան՝ որ Հայ տպագրիչները տարբեր տարբեր աշխատութեանց մէջ՝ իրենցմէ առաջ գոյութիւն ունեցած տպարաններու փորագրիչներուն գործերը կը կիրարկէին:



թ. 22. Աստուածաշունչ Ոսկան վ.ի, էջ 462.

Պոլսոյ մէջ արդէն 1734ին նոյնութեամբ կամ միայն փորագրիչին ստորագրութեան ջնջումով կը գործածուէին. տեսակ մը արուեստի բանագործութեան: Իսկ Ոսկանի տպագրութեան պատկերներուն արտագծութիւններն արդէն 1710էն սկսած էին կ. Պոլսոյ մէջ եթէ ոչ անկէ առաջ:

\*  
\* \*

Իսկ այժմ աւելորդ չեմ սեպեր քանի մը անդրադարձումներով գտնէ Հայ փայտափորագրիչներէն ոմանք ներկայացնել:

Օրինակ՝ 1729ին փորագրութիւնները, արդէն Աւետարանի մը մէջ գործածուած՝ վերստին կը գործածուէին 1732ին՝ երբ փորագրիչը հաւանաբար մեռած ալ էր կամ փորագրութեանց հեղինակը այդ կէս դարու միջոցին մէջ մոռցուած:

Ոսկանի Աստուածաշունչին պատկերներուն հետեւող եղած է կ. Պոլսոյ տպագրութիւնները պատկերագարող Հայ փորագրիչ մը՝ որ միայն Գ Ր՝ երբեմն փակագիր՝ կը ստորագրէ: Երբեմն կը պատահի որ այս ստորագրութիւնը Գ կամ Գ Մ ի նմանութիւն կ'ունենայ: Անոր ինծի ծա.